Doi: 10.56737/2953-7843-2025.11-55

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Ս. Էջմիածնի Մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն

ԿԱՆԱՆՑ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ. *ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*[1]

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, որպես ինքնուրույն ազգային-հոգեւոր կառույց, դարերի ընթացքում ձեւավորել է իրավական եւ վարչական համակարգ, որը հաճախ գործել է աշխարհիկ իշխանությունից անկախ՝ թե՛ օսմանյան, թե՛ ռուսական, թե՛ պարսկական գերիշխանության պայմաններում։ Հայաստանյայց Եկեղեցին իր պատմության ողջ ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձրել կանանց իրավունքների պաշտպանությանը։

Ընդհանրապես նկատելի է հետաքրքիր օրինաչափություն. կանանց իրավունքների եւ դրանց պաշտպանության մասին բարձրաձայնվում է հատկապես ազատագրական պայքարի, ժողովրդավարական շարժումների ու գաղափարների տարածման ժամանակ, ինչն ընկալելի է, քանզի ցանկացած ազատագրական շարժում ճնշված եւ իրավազուրկ դասերի բողոքի արտահայտություն է կամ նրանց իրավունքների իրացման համար է մղվում[2]։ Այս առումով Հայոց Եկեղեցին պատմական որոշ հանգրվաններում հանդես է գալիս որպես հասարակական կյանքի բարեփոխման առաջամարտիկ։

ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ներսում ձեւավորվում են բարենորոգչական միտումներ, որոնք վերաբերում էին ոչ միայն վարչական եւ կառավարման համակարգին, այլ նաեւ համայնքային կյանքին մասնակցության սկզբունքներին։ Այս շարակարգում կարեւոր նշանակություն են ունենում Մկրտիչ Ա. Խրիմյանի (Վանեցի, 1892–1907 թթ.) ու Գեւորգ Ե. Սուրենյանց (1911–1930 թթ.) կաթողիկոսների կոնդակները, որոնք կանանց ընձեռում են եկեղեցական հա-

---

[1]* *Ստացվել է՝ 5.05.2025, գրախոսվել է՝ 5.06.2025։ էլ. հասցե՝* terararatqahana@gmail.com:

[2] *Տե՛ս* Ս. Դանիէլբեգեան, *Կանանց հարցը, «Մուրճ», 1906, թիւ 6, էջ 33։*

մայնքներում ընտրելու եւ ընտրվելու իրավունք՝ նախքան այդ իրավունքի սահմանումն ու ամրագրումը աշխարհիկ հասարակական ոլորտում։

1906 թ. մայիսի 10-ին Մկրտիչ Ա. Խրիմյան հայրապետը հրապարակում է թիվ 549 կոնդակը, որով հայտարարում է, որ Հայոց Եկեղեցու բոլոր չափահաս անդամները, առանց խտրականության՝ անկախ սեռից, դասակարգից կամ կարգավիճակից, պետք է ունենան հավասար իրավունքներ՝ համայնքային մարմիններում ընտրելու եւ ընտրվելու[3]։

Եղիշե ծ. վրդ. Մուրադյանը նախ արժեւորում է Հայոց Եկեղեցու՝ մեզ հասած «մեծագույն ժառանգության եւ պատվական մարգարիտի» պատմական առաքելությունը՝ ընդգծելով նրա ազգապահպան գործունեությունը[4]։ Այնուհետեւ վարդապետը, անդրադառնալով Մկրտիչ Ա. Խրիմյանի՝ 1906 թ. մայիսի 10-ի հայրապետական կոնդակին եւ դրա կարեւորությանը, ոգեւորությամբ արձանագրում է. «Իրաւամբ կարելի է ասել, որ մայիսի 10-ը մեր եկեղեցու վերածնութեան համար դարագլուխ է եւ մի պայծառ էջ մեր վերջին տարիների տխուր եւ արիւնոտ պատմութեան մէջ։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այդ կոնդակով սրբագործւում է մեր նոր լեզուն, եւ մտցւում ընդհանուր անմիջական ձայնատուփիւն, որով հնար պէտք է լինի լսել ժողովրդի իսկական ձայնը։ Այո՛, հայ ժողովուրդը վերստացաւ իւր կորսուած իրաւունքը, եւ մեր սերունդները՝ այդ նշանաւոր տօնը տօնելիս՝ առանձին ոգեւորութեամբ կը յիշեն Նորին Սրբութեան՝ Հայոց Հայրիկի անունը, որն անկատար չը թողեց իւր սրտի փափագը եւ արձագանք տուաւ ժամանակին ու նրա հասունացած պահանջներին»[5]։

Այս կոնդակը ոչ միայն կարեւոր իրավական փաստաթուղթ էր եկեղեցական կառավարման համակարգի բարեփոխման տեսանկյունից, այլ նաեւ աննախադեպ քայլ՝ կանանց ընտրական իրավունքի ճանաչման ուղղությամբ։ Հետեւելով այդ սկզբունքներին՝ հունիսի 7-ին Հայոց կաթողիկոսը հրապարակում է թիվ 693 կոնդակը, որը մանրամասնում եւ հստակեցնում էր կանոնակարգային մոտեցումները՝ միաժամանակ հաստատելով, որ կանայք ու հոգեւորականներն ունեն համայնքային ընտրություններին մասնակցելու հավասար իրավունքներ[6]։ Հայրապետական կոնդակներում առանձնահատուկ նշված էր, որ սույն իրավունքները տրվում են ոչ

---

[3] *Տե՛ս Կոնդակ թիւ 549, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 10 մայիսի, 1906։*

[4] *Տե՛ս* ԵՂԻՇԷ Ծ. ՎՐԴ. ՄՈՒՐԱԴԵԱՆ, *Բաղձալի արշալոյս, «Արարատ», 1906, Ե., էջ 380–382։*

[5] *Անդ, էջ 382։*

[6] *Տե՛ս Կոնդակ թիւ 693, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 7 յունիսի, 1906։*

թե հօգուտ որեւէ խմբի, այլ՝ ի շահ ամբողջ Եկեղեցու, որովհետեւ «եկեղեցական մարմինները պէտք է կազմուին ըստ ընդհանուր ժողովրդի կամքի»[7]։ Այս ձեւակերպումն արդեն իսկ արտացոլում էր ժողովրդավարական սկզբունքների ներմուծումը եկեղեցական կյանք՝ ընդգծելով ընտրական իրավունքի համահավասարության գաղափարը։

Անաչառությամբ առաջնորդվելով՝ արձանագրենք, որ ժամանակի հայ հասարակությունը ոչ միանշանակ է ընդունում այս երկու կոնդակները. աշխարհիկ ու հոգեւոր որոշ գործիչներ, որակելով դրանք որպես «քայլ դեպի բարեփոխություն», միեւնույն ժամանակ անդրադառնում են սույն վավերագրերի բովանդակությանը, ցույց տալիս թերությունները եւ կանոնական տեսանկյունից ոչ լիովին հիմնավորված դրույթները[8]։

Խրիմյան Հայրիկի նախաձեռնությունները նկատելի արձագանք են գտնում ժամանակի մամուլում եւ հասարակության շրջանում։ 1906 թ. հայ մամուլի էջերում ընդգծվում էր, որ հայ կինն ընտրելու եւ ընտրվելու, իր ազգի ու Եկեղեցու շահերն արտահայտելու իրավունք ունի։ Սա հատկապես ուշագրավ էր այն առումով, որ ժամանակակից Եվրոպայի բազմաթիվ երկրներում կանայք դեռեւս զրկված էին նման իրավունքներից։ Օրինակ՝ Ֆրանսիայում կանայք ընտրական իրավունք են ստանում միայն 1944 թվականին, Շվեդիայում՝ 1919-ին, իսկ Նորվեգիայում՝ 1913-ին[9]։ Այս համեմատությունը թույլ է տալիս բացահայտել, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին որոշ իմաստով գերազանցել է իր ժամանակի իրավաքաղաքական մտածողությամբ՝ որդեգրելով առաջադեմ եւ ներհասարակական փոփոխությունները խթանող առաքելություն։

Մկրտիչ Ա. Խրիմյանի նախանշած ուղով է ընթանում նաեւ Գեւորգ Ե. Սուրենյանցը։ 1917 թ. ապրիլի 7-ին նա հրապարակում է թիվ 678 կոնդակը, որով պաշտոնապես վերականգնվում են եկեղեցական սահմանադրական մարմինների ընտրական գործառույթները, այդ թվում՝ կանանց լիարժեք մասնակցությունը[10]։ Այդ կոնդակում հստակ նշված է. «Այս օրից սկսած արտօնւում են կանացի սեռի իրաւունքները.... իրաւունք ունեն՝

---

[7] Կոնդակ թիւ 693, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 7 յունիսի, 1906։

[8] Տե՛ս օրինակ՝ Մատթէոս Վարդապետ, Մայիսի 10-ի եւ յունիսի 7-ի կոնդակների մասին, «Մշակ», 1906, թիւ 140, էջ 2–3, 1906, թիւ 142, էջ 2–3։

[9] Տե՛ս Francisco O. Ramirez, et al., The Worldwide Rise of Female Suffrage: Democracy, Rights, and Gender in the 20th Century. American Sociological Review, vol. 62, no. 5, 1997, էջ 735–745։

[10] Տե՛ս Կոնդակ թիւ 678, Գէորգ Ե. Սուրէնեանց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 7 ապրիլի, 1917։

ընտրելու եւ ընտրուելու, ձայն տալու եւ առաջնորդ ընտրելու»[11]։ Եթե Մկրտիչ Ա. Խրիմյանի կոնդակները նախանշում էին կանանց իրավասության սկզբունքը, ապա Գեւորգ Ե. Սուրենյանցի կոնդակը տալիս էր գործող օրենսդրական կարգավիճակ՝ հաստատելով, որ այդ իրավունքները ոչ թե սոսկ բարոյական հայտարարություն են, այլ պարտադիր իրավական դրույթ՝ ենթակա կիրառման։ Այս քայլը եկեղեցական կյանքում դարձավ եզակի օրինակներից, երբ կանանց իրավունքը ոչ միայն ճանաչվում, այլ նաեւ գործնականում ամրագրվում էր՝ որեւէ պատրվակի բացառմամբ։

Ուշագրավ է, որ այս ամբողջ գործընթացը տեղի էր ունենում ավանդական եւ պահպանողական հոգեւոր կառույցի ներսում։ Կանանց ներգրավումը եկեղեցական համայնքային կյանքում՝ որպես ընտրող եւ ընտրվող անդամի, արդեն իսկ նախանշում էր իրավահավասարության հասունացման մի փուլ, որը նախորդում էր Առաջին Հանրապետության տարիներին՝ մասնավորապես 1919 թ., կնոջ ընտրական իրավունքի փաստացի ամրագրմանը[12]։

Ավելի վաղ՝ միջնադարում եւս կանանց ներգրավվածության վերաբերյալ կան պատմական վկայություններ։ Կանայք՝ հատկապես միանձնուհիները, կարեւոր դերակատարում են ունեցել Եկեղեցու վանական կյանքում, կրթության եւ գրչության ոլորտում։ Տարբեր սկզբնաղբյուրներ վկայում են նաեւ սարկավագուհիների գործունեության մասին։ Ուստի՝ կարող ենք ենթադրել, որ պատմական տարբեր շրջափուլերում կանանց մասնակցությունը եկեղեցական-համայնքային կյանքին դրսեւորվել է տարակերպ։

Մկրտիչ Ա. Վանեցու եւ Գեւորգ Ե. Սուրենյանցի նախաձեռնությունները վկայում են, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, լինելով ավանդապահ կառույց, միաժամանակ հանդես է եկել որպես իրավական-կանոնակարգային բարեփոխումների հարթակ։ Վերոնշյալ բարեփոխումները ցույց են տալիս, որ Եկեղեցին երբեմն առաջ է անցել աշխարհիկ իշխանությունից՝ մշակելով հասարակական արդարության եւ իրավահավասարության խնդիրների իր լուծումները։ Այն փաստը, որ 1906 եւ 1917 թթ. հայրապետական կոնդակներով կանանց տրվել է ընտրելու եւ ընտրվե-

---

[11] *Կոնդակ թիւ 678, Գէորգ Ե. Սուրէնեանց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 7 ապրիլի, 1917։*

[12] *Տե՛ս «Օրենք Հայաստանի պառլամենտի ընտրությանց». տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)», փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Երեւան, 2000, էջ 96։*

լու իրավունք, թույլ է տալիս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դիտարկել որպես այնպիսի կառույց, որը ոչ միայն պահպանել է ազգային ինքնությունը, այլ նաեւ նպաստել է առաջընթացին, արդիականացմանը։

Այս առնչությամբ հետագա ուսումնասիրությունները կարող են կենտրոնանալ մի քանի առանցքային կետերի՝ նախ՝ կոնդակների բովանդակային ամբողջական վերլուծության, ապա՝ դրանց կիրառման հասարակական հետեւանքների բացահայտման վրա։ Նորովի լուսաբանման կարիք ունի նաեւ տարբեր երկրներում գործող հայ համայնքների եկեղեցական մարմիններում կանանց ներգրավման խնդիրը։ Հատկապես ուշարժան է՝ կանանց իրավունքների ճանաչումը վերածվեց իրական մասնակցության, թե՞ մնաց գրավոր նորմի շրջանակում։

Հոդվածն առաջին անգամ ներկայացնում եւ վերլուծում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում կանանց ընտրական իրավունքի ամրագրումը՝ հիմնվելով Մկրտիչ Ա. Խրիմյան ու Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսների 1906 եւ 1917 թթ. կոնդակների բովանդակության ու վերլուծության վրա։ Կարող ենք վստահաբար արձանագրել, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կանանց ընտրական իրավունքը ճանաչել եւ ամրագրել է պետական մակարդակով նման իրավունքի հաստատումից ու ժամանակի բազմաթիվ առաջադեմ երկրների օրենսդրական նմանօրինակ որոշումից շատ առաջ։ Ստորեւ ներկայացվող կոնդակները թեեւ նախկինում հրապարակվել են «Արարատ» ամսագրում, սակայն այս հոդվածի շրջանակում առաջին անգամ դիտարկվում են որպես կանանց՝ քաղաքական կյանքին մասնակցության իրավունքը օրինականացնող կարեւորագույն փաստաթղթեր։

Սույն կոնդակների բովանդակության ուսումնասիրությունը խիստ կարեւոր է, քանզի ուշագրավ իրողություններ է բացահայտում։ Այսպես՝ պատմական այս վավերագրերը հաստատում են, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Ի. դարասկզբին հանդես է եկել որպես իրավաքաղաքական առաջադեմ դերակատար՝ ապահովելով կանանց մասնակցությունն ընտրական գործընթացներին։ Այս քայլով իսկ Հայոց Եկեղեցին իր ավանդն ունի ինչպես ազգային ինքնակառավարման համակարգի ձեւավորման, այնպես եւ կանանց իրավունքների ճանաչման, ամրագրման եւ պաշտպանության գործում, ինչը թույլ է տալիս գիտական դաշտում վերագնահատելու մեր Եկեղեցու՝ որպես առաջադեմ հոգեւոր կառույցի դերն ու տեղը համաշխարհային պատմության մեջ։

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Ի. դարասկզբին իրականացրած բարեփոխումները՝ կապված կանանց ընտրական իրավունքի ճանաչման հետ, ունեն թե՛ ազգային, թե՛ համաշխարհային իրավական շարակարգում բացառիկ նշանակություն։ Դրանք վկայում են Եկեղեցու՝ ազգային ինքնության պահպանման գործում ունեցած դերի, ինչպես նաեւ հասարակական կյանքի վերափոխմանը եւ առաջընթացին ազդակ հաղորդելու նրա ներուժի մասին։ Հայոց Եկեղեցին, հավատարիմ մնալով իր առաքելությանը, լինելով ազգային-պահպանողական կառույց, վեր կանգնեց պատմական ժամանակաշրջանի կաղապարներից, հետեւողականորեն ձեռնամուխ եղավ իրավական բարեփոխումների իրականացմանը՝ փորձելով լուծել հասարակության մեջ տիրող սեռային խտրականության, իրավունքների անհավասարության, անարդարության ակնառու խնդիրները։

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում կանանց ընտրական իրավունքին վերաբերող վերլուծության շրջանակում կարեւոր ու արդիական ենք նկատում Մկրտիչ Ա. Խրիմյան եւ Գեւորգ Ե. Սուրենյանց երջանկահիշատակ կաթողիկոսների՝ 1906 եւ 1917 թթ. կոնդակների վերահրատարակումը։ Նշենք, որ հայրապետական սույն կոնդակներն սկզբում հրապարակվել են «Արարատ» ամսագրում, այնուհետեւ նաեւ՝ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» հատորաշարի համապատասխան հատորում. դրանք ներկայացնում ենք նույնությամբ՝ որոշ աննշան ընդմիջարկություններով։

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ռուսիայի սահմաններում ապրող Մեր սիրելի եւ հարազատ զաւակներին Հայաստանեայցս Սուրբ Լուսաւորչի նուիրական Աթոռից հայրապետական օրհնութեամբ յայտնում ենք:

Հայրապետական գահ բարձրանալու առաջին իսկ օրերից Մենք փափագում էինք վերականգնել Հայաստանեայց Եկեղեցու՝ դարերի ընթացքում սրբութեամբ պահպանուած իրաւունքը նրա պաշտօնեաների վերաբերմամբ, սակայն ժամանակի ձախորդ հանգամանքները արգելք հանդիսացան Մեր այդ մտադրութեան իրականացմանը, եւ Մեր իղձը ամբողջ 13 տարի մնաց անկատար: Այժմս, որպէս հայրապետ Հայաստանեայցս Առաքելական Եկեղեցու եւ ամենամեծ պատասխանատու նրա ցանկալի բարգաւաճման եւ ծաղկեալ վիճակի՝ թէ՛ Մեզ ընտրող հայ ազգի եւ թէ՛ Աստուծոյ առաջ, հասած ենք համարում ժամանակը եւ հասուն Մեր ժողովրդեան, ուստի Մեր այս հայրապետական կոնդակով վերականգնելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու դարերով սրբագործուած իրաւունքը՝ Քեզ ենք տալիս, ժողովո՛ւրդ Հայոց, թեմական առաջնորդների, յաջորդների, գործակալների եւ հոգեւոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընտրութեան իրաւունքը, որից յետոյ ընտրեալները կը հրաւիրուին իրենց պաշտօնին՝ պետութեան կողմից սահմանուած օրինական ճանապարհով: Ի նկատի առնելով հայ ազգաբնակչութեան վերաբերեալ վիճակագրական ճշգրիտ տեղեկութեանց թերութիւնը, առ այժմ մինչեւ նրանց վերստուգումը եւ հայ ժողովրդից ընտրեալ պատգամաւորների ժողովով հաստատուն կանոնադրութեան մշակումը՝ կարգադրում ենք ընտրութիւնները կատարել կաթողիկոսական ընտրութեան եղանակով՝ ընդհանուր եւ անմիջական ձայնտուութեամբ:

Իսկականի վրայ Նորին Վեհափառութեան սեպհական ձեռքով ստորագրուած է
ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
Ամենայն Հայոց

10 մայիսի 1906 թ.

Ըստ Տոմարիս ՌՅԾԵ.
Մեր հայրապետութեան ԺԳ-րդ տարին
Արարատեան Մայ Աթոռ Ս. Էջմիածնում
Վաղարշապատ
Թ. 549.

Աղբյուրը՝ «Արարատ», 1906, Ե., էջ 375–376:

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԱՊԱՏԻՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՀԱՅՈՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ՅԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ

Ի հետեւումն մայիսի 10-ի, Թ. 549 Մեր կոնդակի՝ տալիս ենք Ձեզ սոյն հրահանգը՝ պատուիրելով ծանուցանել թեմիդ ժողովրդին ու եկեղեցական վարչական հաստատութիւններին ի կատարումն:

ՀՐԱՀԱՆԳ

1. Առաջիկայ օգոստոսի 15-ին գումարուելու է Ռուսիայի սահմաններում ապրող հայ ժողովրդի ընտրեալ պատգամաւորների Կեդրոնական ժողովը:

2. Ռուսահայոց եկեղեցական պատգամաւորական այդ ժողովը կազմուելու է որոշ ընտրողական շրջանների ժողովրդի ընտրած պատգամաւորներից:

3. Այս պատգամաւորներին ընտրելու համար իւրաքանչիւր ընտրողական շրջանում պատուիրակների ժողով է գումարուելու մինչեւ յուլիսի 15-ը: Պատուիրակների ժողովների բացուելու օրը, այլ եւ ժողովատեղը որոշում է մեր ձաւոր հոգեւոր իշխանութիւնը՝ պատուիրակների ընտրութիւնը կատարելուց յետոյ՝ աչքի առաջ ունենալով ժողովրդի յարմարութիւնը. այդ օրուայ եւ ժողովատեղի մասին վաղօրոք (առնուազն երկու շաբաթ առաջ) պիտի յայտարարէ ժողովրդին լրագրութեամբ, թերթիկներով կամ ծանուցումներով:

4. Պատուիրակների ժողովները կազմուելու են իւրաքանչիւր համապատասխան ընտրողական շրջանի բոլոր ծխական եկեղեցիների (կամ աղօթատների) ընտրած պատուիրակներից: Մինչեւ 1000 հոգի ժողովուրդ ունեցող իւրաքանչիւր եկեղեցի ընտրում է մի պատուիրակ. իսկ 1000-ից աւելի ժողովուրդ ունեցող եկեղեցիները իւրաքանչիւր 1000-ի համար մի մի պատուիրակ են ընտրում (վերջին 1000-ը կարող է լրիւ չլինել, սակայն՝ ոչ պակաս 500-ից): Պատուիրակների ժողովը կանոնաւոր է համարւում, եթէ ներկայ է բոլոր ընտրուած պատուիրակների կէսից աւելին:

5. Պատուիրակների ընտրութեանը պէտք է ձեռնարկել սոյն հրահանգը ստանալուց անմիջապէս յետոյ: Ընտրութիւնը կատարելու են ծխական ժողովները, որոնց ընտրելու եւ ընտրուելու իրաւունքով մասնակցելու իրաւունք ունին նոյն եկեղեցու (կամ աղօթատան) 21 տարին լրացրած բոլոր ծխականները. գումարուելիք ծխական ժողովի մասին եկեղեցու քահանաները պարտաւոր են լրագրութեամբ, թերթիկներով եւ թէ եկեղեցում բերանացի ծանուցումներ անել: Առաջին անգամ ժողովը կանոնաւոր է համարւում եթէ ներկայ է իրաւասու ծխականների գոնէ ½ մասը. իսկ երկրորդ անգամ՝ որքան էլ որ լինի ներկայ ժողովականների թիւը:

6. Պատուիրակների իւրաքանչիւր ժողով Կեդրոնական ժողովին մասնակցելու համար պատգամաւորներ է ընտրում իւր ընտրողական շրջանի հայ ազգաբնակչութեան թուի համեմատ:

Ծանօթ. – Թէ որո՞նք են ընտրողական շրջանները, որտե՞ղ են լինելու պատուիրակների ժողովատեղերը եւ թէ ո՞ր շրջանից քանի՞ պատգամաւոր է ընտրուելու՝ ի նկատի ունենալով, որ մօտաւորապէս իւրաքանչիւր 20 000 հոգուց մի պատգամաւոր է լինելու՝ այդ մասին տես յօդ. 10:

7. Թէ պատուիրակ, թէ պատգամաւոր կարող են ընտրուել նաեւ նոյն ծխական եկեղեցուն կամ ընտրողական շրջանին չպատկանող անձեր: Իւրաքանչիւր իրաւասու ծխական, պատուիրակ եւ պատգամաւոր կարող է ունենալ միայն մէկ ձայն:

8. Կեդրոնական ժողովը, իբրեւ Ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ եւ տնօրէն, կարող է իւր բնութեանը ենթարկել եւ որոշումներ տալ Ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ: Կեդրոնական ժողովի առաջիկայ նստաշրջանի առաջ դնում ենք խնդիրներ՝ դպրոցական, տնտեսական գործերը եւ թեմական ժողովները կարգաւորելու հարցերը:

9. Սոյն հրահանգը գործելու է մինչեւ Կեդրոնական ժողովից հաստատուն Կանոնադրութեան մշակումը եւ վաւերացումը:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
Ամենայն Հայոց

7 յունիսի 1906 թ.
Ըստ Տոմարիս ՌՅԽԵ.
Մեր հայրապետութեան ԺԳ-րդ տարին
Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում
Վաղարշապատ
Թ. 693.

Աղբյուրը՝ «Արարատ», 1906, Զ.–Է., էջ 471–474։

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Առաջնորդաց (Ռուսաստանի)

Ի լրումն կոնդակաց Մերոց յ7 եւ յ30-ն յունիսի տարւոյս թ. 693 եւ 787՝ վասն կանոնաւորելոյ զընտրողական գործ յամենայն վիճակս Ռուսահայոց եւ ունելոյ զնիշտ շնչագրութիւն երկուց սեռից՝ արանց եւ կանանց յամենայն վիճակաց Ռուսահայոց, այսու հայրապետական կոնդակաւ Մերով պատուիրեմք Ա. տալ կազմել ի ձեռն ամենայն քահանայից զլրիւ ցուցակս ծխականաց՝ արանց եւ կանանց ցուցմամբ չափու ամաց իւրաքանչիւրոց. զցուցակս զայդոսիկ ստորագրութեամբ ծխատէր քահանայից առաքել ի հոգեւոր կառավարութիւնս եւ ի կոնսիստորեայս ց1 դեկտեմբերի ներկայ ամի պահելով առ ինքեանս՝ (քահանայս) զպատճէն առաքեալ ցուցակի:

Բ. 9–10 դեկտեմբերի մատուցանել Մեզ ընդհանուր համաոտակի ցուցակ թոյլ արանց եւ կանանց գիւղօրէից եւ քաղաքաց՝ քաղելով ի վերոյիշեալ ցուցակաց:

Գ. Զցուցակս իրաւասու անձանց, որոց լրացեալ է 21 ամն (տե՛ս կոնդակ թ. 693 յունիս 7 յօդ. 5) կազմել առանձինն եւ յիւրաքանչիւր եկեղեցւոջ կախել յորմոցն եւ զպատճէնս այդոցունց առաջի առնել ի հոգեւոր կառավարութիւնս կամ ի կոնսիստորեայս ի պահ. եւ այս ամենայն պարտին աւարտեալ եւ պատրաստ լինիլ ց20 դեկտեմբերի ներկայ ամի:

Իրաւասու ծխական համարին անձինք, որք ոչ պակաս, քան զվեց ամիս բնակին ի տեղւոջ ընտրութեան:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին 9-ն սեպտ. 1906 թ.

№ 1097–1102

Աղբյուրը՝ «Արարատ», 1906, Ը.–ԺԱ., էջ 635–636:

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ռուսիայի սահմաններում ապրող Մեր սիրելի եւ հարազատ զաւակներին՝ Հայաստանեայց Ս. Լուսաւորչի նուիրական Աթոռից Մեր հայրապետական օրհնութիւնները:

Այսու կարեւոր ենք համարում Մեր տուած սահմանադրական կոնդակների (մայիսի 10 եւ յունիսի 7-ին) մի քանի կէտերը բացատրել մի քանի վարչական անձանց եւ հաստատութիւնների յարուցած խնդիրներին բաւարարութիւն տալու համար:

1. Հրահանգ-կոնդակի (7 յունիս, թ. 693) 5-րդ յօդուածում ասուած է. «Պատուիրակների.... ընտրութիւնը կատարելու են ծխական ժողովները, որոնց մասնակցելու իրաւունք ունին, ընտրելու եւ ընտրուելու իրաւունքով նոյն եկեղեցու (կամ աղօթատան)՝ 21 տարին լրացած բոլոր ծխականները»: Արդ, հարց է յարուցուած, թէ արդեօք ընտրելու եւ ընտրուելու իրաւունք ունի՞ն նաեւ կանայք, աշխարհավար եւ կուսակրօն հոգեւորականութիւնը:

Մեր տուած կոնդակների ընդհանուր ոգուց ակներեւ է, որ եկեղեցու բոլոր չափահաս անդամները, առանց խտրութեան սեռի եւ դասակարգի, օգտուելու են ընտրելու եւ ընտրուելու հաւասար իրաւունքով, ուստի եւ՝ թէ՛ կանայք եւ թէ՛ հոգեւորականութիւնը, հաւասար աշխարհիկ այր մարդկանց, ունին ընտրական (թէ՛ ընտրելու եւ թէ՛ ընտրուելու) իրաւունք: Ծխական հոգեւորականութիւնն ընտրութիւններին մասնակցում է՝ իւրաքանչիւրը իւր ծխական եկեղեցում. իսկ կուսակրօն հոգեւորականութիւնը (ի թիւս որոց եւ հաւատաւոր կանայք)՝ իրենց բնակութեան տեղի կամ պաշտօնավայրի մերձաւոր ծխական եկեղեցիներից մէկում:

2. Ընտրողական շրջանների, ընտրողական ժողովատեղիների եւ պատգամաւորների թուի բաշխումը (կոնդ. 7 յունիս, թ. 693, յօդուած 10) կարող է վերաքննուել եւ փոփոխութեանց ենթարկուել միմիայն Կեդրոնական ժողովից: Այս խնդիրների վերաբերմամբ որեւէ առարկութիւն ունեցողները, հիմնուած հաստատուն վիճակագրական տեղեկութեանց վրայ, պիտի դիմեն Կեդրոնական ժողովին:

3. Տալով ժողովրդական ընտրողներին «Թեմական առաջնորդների, յաջորդների, գործակալների եւ հոգեւոր-վարչական հաստատութեանց (այն է՝ սինոդի, կոնսիստորիաների, Հոգեւոր կառավարութեանց եւ այլն) պաշտօնեաների ընտրութեան իրաւունքը» (տե՛ս կոնդ. մայիս 10, թ. 549), կարգադրել էինք՝ առ այժմ, մինչեւ պատգամաւորների ժողովով հաստատուն կանոնադրութեան մշակումը, այդ ընտրութիւնները կատարել կաթուղիկոսական ընտրութեան եղանակով: Բայց որովհետեւ այժմս արդէն Մեր հրահանգ կոնդակով (7 յունիս, թ. 639) աւելի ճշտուած են ընտրութեան հանգամանքները եւ մօտ է Կեդրոնական ժողովի գումարումը, ուստի եւ բոլոր պաշտօնեաների ընտրութիւնը յետանգել, մինչեւ որ պատգամաւորների Կեդրոնական ժողովն այդ մասին կը մշակէ մանրամասն հրահանգ:

4. Հիմնուելով Մեր մայիսի 10-ի կոնդակի վրայ՝ պաշտօնեաներից շատերը տուել են իրենց հրաժարականները, ժողովրդական ընտրութեան ենթարկուելու ցանկութեամբ: Այսու տնօրինում ենք, որ այդպիսի հրաժարականները՝ ստորադաս պաշտօնեաներինը պիտի մնան թեմական առաջնորդների մօտ, իսկ բարձրաստիճան պաշտօնեաներինը, որոնց պաշտօնավարութիւնը վաւերացւում է կայսերական հաճութեամբ, Մեզ մօտ, ապագային ըստ ընտրութեանց հետեւանքի եւ կայսերական տիրող օրէնքների համաձայն կարգադրելու համար: Հրաժարական տուող պաշտօնեաները մնում են իրենց պաշտօնեներում, մինչեւ Կեդրոնական ժողովից տրուած հրահանգի համաձայն՝ ընտրութեանց կատարումը, եւ այդ մասին Մեր տնօրինութիւնը:

Իսկականի վրայ Նորին Վեհափառութեան սեպհական ձեռքով ստորագրուած է

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ամենայն Հայոց

Աղբյուրը՝ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Է., Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903–1907 թթ.), կազմ.՝ Ս. Բէհբուդեան, Երեւան, 2000, էջ 427–428:

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Մեր սիրեցեալ որդիներին եւ մեր Լուսոյ Մայր Ս. Էջմիածնի հարազատ զաւակներին, ամէն դասակարգի այր եւ կանանց, որոնք բնակւում են քաղաքներում եւ գիւղերում, ուրախակցական ողջոյն, հայրապետական եւ Միածնէջ Ս. Տաճարիցս եւ մեր Ս. Հօր բազմաչարչար Գրիգոր Լուսաւորչի առաքելական գահից օրհնութիւն։

Մեր ս. Եկեղեցու սկզբնաւորութեան առաջին իսկ օրերից սկսած՝ քրիստոնէական եւ համայնական լայնեզր հաւասարութեան ոգին հանրական կեանքի գործերի մէջ փայլել եւ զարգացել է մեր մէջ, որով Եկեղեցու իւրաքանչիւր անդամ, որ օգտակար էր համարւում հասարակական կազմութեան գործակցութեան համար, նորա կանգնման գործին էր գալիս մասնակցելու։ Այս ոգին մեր հանրական գործերի կենդանութեան աղբիւրն էր. իւրաքանչիւր անհատ, որ միանգամ այդ ոգով էր համակուած, այդ ոգով եւ փայլում էր համայնքի կազմակերպութեան գործերի մէջ՝ լինէր դա Եկեղեցու պահպանութեան, թէ նորա փառազարդութեան, թէ հասարակական որ եւ է այլ հաստատութեան գործ, որոնք Եկեղեցու հովանաւորութեան տակ աճելով եւ զարգանալով, ամենքին եւս իրաւունքի տեսակէտից՝ հաւասար անդամներ էր ճանաչում՝ լինէին դոքա արքայական տան անդամներ, թէ հասարակ շինական, նախարարական ազատորդիների սերունդ եւ թէ տկար կանանց ներկայացուցիչներ։ Այս իսկ պատճառով եւ իւրաքանչիւր անհատ, որ միանգամ սիրով մտել էր համայնական կեանքի նաւը, սիրայօժար սրտով եւ իւր գործակցութիւնն էր դնում այնտեղ։

Սակայն, մեր ս. Եկեղեցու հիմքը կազմող եւ մեր հասարակական կեանքի ինքնուրոյն էութեան բնոյթ տուող այս ոգին, օտար ազդեցութիւնների եւ օտարամուտ մտածողութեան եղանակի ու սկզբունքների ազդեցութեան ենթարկուելով՝ այլասեռ տարազ ստացաւ, մինչ այն աստիճան, որ իւր սկզբանական բնոյթ՝ իսկական տիպարն իսկ մոռացութեան տուաւ։ Մեր հասարակական-համայնական կեանքը նոր ձեւով կերտուեցաւ, եւ այդ կերտուածքը շատ երկար ժամանակ նորա իսկական տիպարը համարուեցաւ, որի հետեւանքն

եղաւ այն, որ մեր հասարակական կեանքի շրջանից բոլորովին վանուեցաւ ազգային եւ հանրական գործերից որոշ տարրերի մասնակցութիւնը, որոնցից մէկն էր եւ կանացի սեռի զրկուիլն այդպիսի մասնակցութիւնից։

Այժմ, թող բաւական համարուի, որչափ մեր Եկեղեցու այս ոգին գրուանի տակ է պահուած եղել, մի ոգի, որով մեր Եկեղեցին փայլել է թէ՛ իւր նախնական շրջանի ժամանակ, թէ՛ յետագայ դարերում։

Հայոց ժողովո՛ւրդ,

Այս օրուանից սկսած արտօնում ենք կանացի սեռի իրաւունքների վերականգնումը համայնական գործերի մէջ։ Կանացի սեռի իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի՝ տղամարդոց հետ միասին մեր հանրական կեանքի ամէն մի գործի մէջ հանդես գալու՝ թէ՛ ձայնտուութեան եւ թէ՛ ընտրութեան ժամանակ, իրաւատէր լինել ե՛ւ ընտրելու, ե՛ւ ընտրուելու, մի արտօնութիւն, որ մինչեւ այժմ այր մարդոց էր վիճակուած եւ նոցա՛ իրաւունքն էր համարւում։

Հայոց ժողովո՛ւրդ,

Այսուհետեւ հասարակական իւրաքանչիւր գործ համայնքի ամբողջ կազմի ազատ ընտրութեամբ պիտի կատարուի։ Այս կարգերի եւ կանոնների նախնական ձեւի վերականգնումը՝ մեր հաստատութիւնների յարատեւ եւ կենսունակ գոյութեան հիմքն ենք ճանաչում. հաստատութիւններ, որոնցով փայլեցին մեր նախնիքը, եւ որոնց գոյութեան պահպանութեան համար մեծ յոյսեր ունենք, որ շատ առաւել նախաանձախնդրութիւն պիտի ցոյց տաք, որ ընդհանուրի շահերի զարգացման եւ այդ հաստատութիւնների կեանքի խնդիրն է։

Ուստի Մեր այս՝ ընդհանուրիդ ուղղած կոնդակի հետ ուղարկուած հրահանգ կանոնների համաձայն՝ այսուհետեւ ազատօրէն կձեռնարկէք ձեր հոգեւոր առաջնորդների, ինչպէս նոցա փոխանորդների, այլ եւ այն բոլոր հոգեւոր պաշտօնեաների ընտրութեան, որոնք քրիստոնէական վարդապետութիւնն ու ուսումն են մատակարարում ձեզ։ Կը ձեռնարկէք նոյնպէս թեմական ժողովների եւ թեմական խորհուրդների անդամների ընտրութեան, որոնք ձեր ընտրուած առաջնորդի հետ համագործակցութեան են կոչւում։

Եվ Մենք, որ հասարակաց Հայր եւ մեր ս. Եկեղեցու Գլուխ ենք անուանուած՝ ազգիս բոլոր ներկայացուցիչների ազատ ընտրութեամբ եւ մեր ս. Եկեղեցու կանոնական կարգերի համաձայն, մեծայոյս ենք, որ իմ հօտի եւ սիրելի հոգեւոր զաւակներիս նախկին իրաւունքների եւ արտօնութիւնների վերականգնումը, նոցա մտքի եւ սրտի մէջ հեռատես իմաստութեան ոգի կյարուցանէ, որպէս զի ձեռք զարկեն հանրային եւ ազգային հաստատութիւնները բարեվայելուչ վիճակի վերածելու, դպրոցները բարգաւաճ դարձնելու, ինչ-

պէս եւ զանազան կրթական բուծարանների յառաջադիմութիւնն ապահովելու, այլ եւ հոգ կը տանեն մեր ս. Եկեղեցու բարեզարդութեան մասին, որ մեր կեանքի մէջ իբրեւ մի ամուր եւ անյողդողդ խարիսխ է եղած, դարեր շարունակ մեր արտօնութիւնների եւ իրաւունքների պահպանութեան համար, մի ամուր խարիսխ, որի վերայ էին յենւում մեր նախնիքը՝ պատմական մեր մրրկակոծ կեանքի ռոպէներին եւ նորան ապաւինած՝ փրկութեան նաւահանգիստ հասնում,– Մենք մեծայոյս ենք, որ մեր սիրելի հոգեւոր զաւակները եւ մեր հօտի անդամները պիտի աղօթեն եւ Մեզ համար, որպէս զի Մեր կեանքի արեւի վերջալոյսի պահուն, զօրացած Տիրոջ օգնութեամբ, կարող լինենք կատարելու մեր որոշումը, որ վերաբերում է Մեր ս. Եկեղեցու կանոնական սահմանադրութեան վերջնական կազմութեան Ազգային ընդհ. ժողովի ձեռքով, մեր նախաւանդ կարգերի եւ իրաւունքների եւ Մեր լուսոյ Մայր ս. Եկեղեցու ոգու եւ նորա հոգեւոր զաւակների հոգու համաձայն:

Այժմ եկէ՛ք, իմ հարազատ եւ սիրելի զաւակներս, շրջապատեցէ՛ք ձեր Մօրը, որ իբրեւ սրատես եւ խնամող արծիւ, մեզ իւր թեւերի հովանու տակ պատսպարելով, ամենքիս բերեց, հասցրեց մինչեւ այս շրջանը. կարկառեցէք ինձ աջակցութեան ձեռք եւ օգնութեան բազուկ, որպէս զի կարողանանք Մեր ձեռնարկած նորակերտ շինութիւնը կանգնեցնել, որպէս զի Մենք եւս ձեզնով զօրացած՝ նոր ոգի առնենք ձեզ խնամելու հոգածութեան ժամանակ, մի կոչում, որի համար եւ կոչուած ենք Մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսից:

Ողջ լինիք, զօրացած Տիրոջ օգնութեամբ եւ օրհնուած Մեզնից առ միշտ: Ամէն:

Իսկականի վերայ Ն. Սրբութեան ձեռքով ստորագրուած է՝

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1917 թ. ապրիլի 7

Մեր Տոմարով ՌՅԿԶ.

Մեր հայրապետութեան Զ. տարին

Արարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնում

Վաղարշապատ

Թ. 678

Աղբյուրը՝ «Արարատ», 1917, Դ.–Ե., էջ 264–267:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Կին, ընտրական իրավունք, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, Մկրտիչ Ա. Խրիմյան, Գեւորգ Ե. Սուրենյանց, կանոնակարգ, հոգեւոր իրավունք, եկեղեցական կանոններ, կոնդակ:

РЕЗЮМЕ

Статья посвящена историко-политическому, религиозному и правовому анализу участия женщин в жизни Армянской Апостольской Святой Церкви – в частности, вопросу избирательного права. Опираясь на кондаки (патриаршие указы) католикосов Мкртича I Хримяна и Геворга V Суренянца 1906 и 1917 годов, автор прослеживает постепенное расширение роли женщин в церковных и общинных институтах. Особо подчёркивается, что восстановление избирательного права стало возвращением к принципу, некогда утраченному, однако глубоко укоренённому в подлинной христианской и армянской традиции.

В сопоставлении с современными суфражистскими движениями эти правовые акты раскрывают прогрессивную позицию Церкви и свидетельствуют об укреплении демократических основ национального самоуправления. В результате Армянская Церковь предстаёт одним из ранних и значимых участников истории борьбы за права женщин.

SUMMARY

This article provides a historical, political, religious, and legal analysis of women's involvement, particularly of the issue of suffrage, in the Armenian Apostolic Holy Church. Relying on the encyclicals of Catholicoi Mkrtich I Khrimian and Gevorg V Surenyants of 1906–1917, it traces the gradual progress of women's roles in church and community institutions and highlights the restoration of the right to vote as a principle long neglected but rooted in authentic Christian and Armenian traditions. When compared to contemporary movements for women's suffrage, these legal acts demonstrate the progressive stance of the Church and the strengthening of the democratic foundations of national self-government, as a result of which the Armenian Church became an early and significant participant in the history of women's rights.